

Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՔԱՐՈՉՐ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԴԱՏԱՎՈՐԻ ԿԻՐԱԿԻՆՆ

(30 մարտի 2003 թ.)

«Յանուն Տօր եւ Որդոյ եւ Տոգոյն Սրբոյ. ամէն»:

Հիսուս հեքայալ առակը պատմեց իր աշակերտներին՝ ցույց տալու համար, թե պետք է աղոթել առանց վիսպակելու: «Մի քաղաքում մի դարավոր կար, որ ոչ Աստուծոց էր վախենում և ոչ էլ մարդկանցից ամաչում: Նույն քաղաքում մի այրի կին էլ կար, որ դիմում էր նրան և խնդրում իրավունքս պաշտպանիր իմ հակառակորդից: Դարավորը երկար ժամանակ մերժում էր դարը տեսնել, սակայն ի վերջո ինքն իրեն ասաց, թե Աստուծոց չեմ վախենում և մարդկանցից էլ չեմ ամաչում, բայց քանի որ այս այրին նեղություն է տալիս ինձ, նրա դարը տեսնեմ, որպեսզի անվերջ մոտս գալով՝ չանհանգստացնի ինձ»: Ապա Տերը շարունակեց. «Լսեցեք, թե ինչ է ասում այս անիրավ դարավորը, իսկ Աստված ինչքան կհամբերի իր ընտրյալների կրած անիրավությանը, չի՞ պաշտպանի նրանց, որոնք գիշեր ու ցերեկ դիմում են Իրեն: Այո՛, ասում եմ ձեզ, նրանց իրավունքն իսկույն կպաշտպանի: Բայց մարդու Որդին երբ գա, արդյոք հավաքեք կգրնի՞ երկրի վրա» (հմմտ. Լուկ. ԺԸ 1-8):

Ահավասիկ Մեծի Պառհոց եկեղեցու կիրակին է, երբ բոլորս ապաշխարանքի աղոթքներով կղիմենք մեր Աստծուն, որպեսզի Նա մեզ գորացնի, մեզ մաքրի և մեզ դեպի աստվածգիտության լույսն առաջնորդի: Որովհետև այս շրջանը մենք կուգենք արժեկորել Աստծու հանդեպ մեր ունեցած հավատը գորացնելով, Նրա իմաստությամբ և Սուրբ Տոգու շնորհներով այնպես մաքրվելու, որ մեր մեջ վերականգնվի Աստծո այն պատկերը, որ, ցավոք, ամեն օր աղարարվում է այս աշխարհի վրա:

Իրոք միակ փրկարար ուժն աղոթքն է: Այն ուղղակի կապն է, առանց միջնորդության հարաբերություն Աստծո հետ, որով Աստված կայցելի մեզ, և մենք Աստծո ուղիղ և արդար ճանապարհներին մեջ կմտնենք: Ահավասիկ այսօր մեր Եկեղեցին մեր ուշադրության կհանձնի առակ մը, որ մեզի կտրվեցնե ոչ թե ինչ է աղոթքը, այլ ինչպես պետք է աղոթել Աստծո: Դուկաս ավետարանիչ կըսե. «Հիսուս այս առակը պատմեց՝ ցույց տալու համար, թե ինչպես պետք է աղոթել»:

Դարավորի այս առակը չի պարզամեր, թե մենք բոլորս դարաստանի ենթարկվելիք մարդիկ ենք և պետք է հիմիկվանից այնպես պարտասովինք, որ երբ այդ դարաստանի օրը գա՝ արդարանանք: Որովհետև քրիստոնյաներս գիտենք, որ մենք մեղավոր ենք, և ուր մեղքը կա, այնտեղ դարաստան կա: Բայց իսկական քրիստոնյան Մեծի Պառհոց շրջանին կուգի Աստծու հետ այնպես հաշտվել, որ այդ դարաստանը մեր անմահության և մեր հոգին փրկող արարքի վերածի ու ոչ թե պարծի: Եվ դրա համար պետք է լավ հասկանալ, թե մեր մեծագույն Ուսուցիչը, մեր ամենամեծ Վարդապետը՝ մեր Տերը, ինչ է ասում աղոթքի մասին:

Մեր Տերը կըսե, թե պետք է միշտ աղոթել, ճիշտ այդի կնոջ նման: Այրիներն ընդհանրապես ընկերության մեջ տվար, անպաշտպան արարածներ են, որոնց ո՛չ ոք իրավունք կտա: Բայց այս այդի տիկինը իր իրավունքին տիրացավ, կրցավ իր նպատակին հասնիլ, կրցավ արդարության մոտենալ, որովհետև հարապնդողներն, միշտ և կանոնավոր կերպով իր աղոթքը ըրավ այն իմաստով, որ իր իրավունքը պաշտպանեց: Եթե մեկ անգամ միայն ուզեր իր իրավունքը, եթե մեկ-երկու հայց ներկայացներ իր դատավորին, պիտի ստանար իր իրավունքը: Իսկ մենք որքան հաճախ կըսենք. «Ես աղոթել եմ Աստծուն, և Աստված ինձ չի պատասխանում: Չպիտի այլևս աղոթեմ. մեկ անգամ եմ աղոթել, երկու անգամ եմ Աստծուն դիմել, այլևս Աստված ինք թող տնօրինի պետք եղածը»:

Քրիստոնյա աշխարհիկն համայն այսօր կըսվի, թե կիրակի օրերու քրիստոնյա են միայն: Շաբթվան ամբողջ օրերը մեր Տերը կմոռնանք, նրա պատվիրանները կմոռնանք և միայն կիրակի օրը մի քանի ժամ մեր Տերը կհիշենք, իսկ մնացյալ ժամանակները՝ կրկին կվերադառնանք մեր աշխարհիկ կյանքին:

Եթե կուզենք Աստծո նմանիլ, եթե կուզենք զԱստված գտնել, եթե կուզենք Աստծո շնորհքին արժանանալ, հարապն, կանոնավոր և հետապնդված պետք է ըլլա մեր ճիգը զԱստված փնտրելու և Անոր մերձենալու համար: Երկրորդ պատվերը մեր Տիրոջ այն է, որ աղոթքի արդեն պետք է կատարյալ վստահությամբ աղոթել:

Առանց վստահության որևէ մեկուն եթե մենք կդիմենք, կեղծիք է: Եթե չենք վստահեր Աստծո և կերթանք Աստծո, մի քանի բան ուզելու կամ մեկ-երկու փառաբանական խոսք ըսելու, ստախոս ենք: Մենք Աստծո արժանի գավակները չենք դառնար, եթե Աստծո մեր ասելիքը, եթե Աստծուց մեր խնդրելիքը Նրա հարազատ ճանաչողութենեն, Նրան որդիության զգացումեն և Աստծո Հայրության ապրումեն չի բխիր: Սուր են, փուչ են մեր բոլոր արածները: Ո՛չ իրավունք կհասնի մեզ, ո՛չ էլ խնդրանքը կհասնի Աստծո և ո՛չ ալ մենք կհասնինք մեր նպատակին: Ամեն ինչ կյանքին մեջ մեր ձեռքեն կփախնի և մեր հակակշիռից դուրս կուգա, եթե վստահության զգացումով չեն փոքորված մեր բոլոր խոսքերն ու մտածումները:

Միեւիլ քույրեր և եղբայրներ, վստահ եմ, որ այս բոլորը լսելեն ետք ոմանք կըսեն. «Դուրիս է քարոզելը, բայց որքա՞ն դժվար է հավատարմ, թե ինչ որ կխնդրենք Աստուծմե, իրավ կարվի մեզի, կամ եթե Աստծո ներկայանանք վստահությամբ, ամեն ինչ կգտնենք»:

Ղուկաս ավետարանիչը, որմն առնված է այս առակը, իր Ավետարանը գրած է քաջալերելու առաջին դարու այն բոլոր քրիստոնյաները, որոնք ամեն օր չարչարանքի մեջ էին, բանտերու մեջ զրկանքներու կենթարկվելին, կենտրվելին առյուծներու դիմաց, կչարչարվելին իրենց քրիստոնեական հավատքի համար և կնահապարակվելին: Ահա նրանց համար է այս Ավետարանը, այս խոսքը իրենց համար է, որ իրենց Աստծո հանդեպ ունեցած վստահության մեջ պիտի մնան, որ իրենք Աստծո որդիության զգացումին մեջ ապահով մնան:

Ներանոտական բարքերը, աշխարհիկ այն խոստումները, որոնք իրենց կշռալվելին հավատք ուրանալու համար, բայց մանավանդ սուր, կեղծ աղանդները և մարգարեները, որոնք մտել էին քրիստոնեական Եկեղեցիին մեջ, այդ հավատը կքանդեին և շարքերու կորստյան պարճառ կդառնային: Ուստի առակին վերջը Ղուկաս ավետարանիչ կհիշե քրիստոսի մեկ խոսքը, թե «երբ մարդու Որդին գա, արդյո՞ք հավատք կգտնի երկրի վրա»:

Մեր Տերը գիտեր, որ չպարասխանված աղոթքները մեր հավաքը կբանդեն, ինչպես և մենք կկարծենք, թե Եկեղեցում կադարած աղոթքները փեղ չեն հասնիր: Այսօր չե՞ք լսեր, հարազատներ, թե մեր ժողովուրդը ինչ կըսե երբեմն. Եկեղեցի կերթանք, ո՛չ Աստված մեզի բան կուրա, ո՛չ հոգևորականները մեզ կօգնեն: Մեր երիտասարդ հոգևորականներն չենք լսեր, ինչպես ես իմ ուսանողներես կլսիմ, որ «Մրբազան, կերթանք, կբարոզենք, մեր ամբողջ հոգին կդնենք, բայց ժողովուրդին մեջ հավաք չենք փեսներ»:

Մենք կակնկալենք, որ Աստված մեր հարմար փեսած ժամանակին և որ մեր պահանջած ձևով պարասխանի մեր խնդրանքներին: Սակայն ճիշտ է, Աստված անպայմանորեն փվյալ ժամանակի՞ն մեջ պետք է պարասխան փա: Աղոթքը Ալադինի լապտերն է, որ Աստված փվեր է մեր ձեռքը, որպեսզի ամեն անգամ, երբ իրեն դիպչենք, մեր ցանկացած պահանջքին գոհացումը գտնենք: Եկեք պահ մը ընդունինք, որ իրականությունն այդպես ըլլար:

Քրիստոս երբ Գեթսեմանիի պարտեզին մեջ կաղոթեր՝ «Աստված, այս բաժակը ինձման հեռացուր», եթե նույն պահուն Աստված գար, մեր Տերը փրկեր, մենք փրկության պիտի արժանանայի՞նք, Իր խաչի շնորհքին, չարչարանքների շնորհքին և Հարության պիտի արժանանայի՞նք:

Պարկերը փոխադրենք մեր Եկեղեցվո կյանքին մեջ: Եթե Գրիգոր Լուսավորչին ամեն մեկ-երկու ապրակեն վերջ Աստված գար և չարչարանքներն ազատեր, մենք Սուրբ Էջմիածինը պիտի ունենայի՞նք, հայ ժողովուրդին դարձը պիտի իրականանա՞ր:

Եթե Մեսրոպ Մաշտոց փարիսեր անքուն մնացած և աղոթած շրջանին մեկ-երկու օրեն լքեր իր գործը և թողներ Այբուբեն գրելու իր ճիգը, մենք երկնապարզն հայոց գրերը պիտի ունենայի՞նք: Նարեկացին իր վանքին մեջ եթե իր եղբայրներուն կողմն չհարգարվեր, չհալածվեր և առաջին հալածանքներն փախներ ու երթար, պիտի կարենայի՞նք մենք հրաշագործ աղոթքներն ունենալ:

Աստված Իր ժամանակն ունի և Աստված Ինք գիտե՞ ինչ ձևով և ինչպես պարասխանել մեր աղոթքներուն: Բայց, ժողովուրդ, բոլորիս պարտականությունն է՝ հավաքը պահել: Առանց հավաքի չկա Աստուծո հասնիլ: Առանց հավաքը պահելու չկա Եկեղեցի, առանց հավաքի որևէ գանձ և որևէ մեկ հոգրության աղբյուր և որևէ մեկ սրեղծագործ կյանքի աղբյուր չկա: Անոր համար կզգաք, թե Հայոց Եկեղեցին իրապես որքան կմտահոգվի, երբ հավաքի պակաս փեսեն իր ժողովուրդի կյանքին մեջ և կամ մեկ-երկու աղոթքեն վերջ մեր ժողովուրդը թողնի և գնա աղանդների, հերետիկոսների և աշխարհի մեջ իրեն փառք խոստացողների եսկից:

Եթե այսօր մեր Տիրոջմեն և Աստուծո մեկ բան պետք է սորվենք, հավաքով աղոթելն է հավաքը պահելու համար և Աստուծո օրհնանքը երկինքեն երկիրը հասցնելու համար:

Այաշխարհության այս օրերուն իրոք բոլորս իրարու սիրտ փանք, որ հեղհեղականորեն և սրտանց աղոթենք, Աստծուն վստահելով աղոթենք և այդպես աղոթելով մեր Եկեղեցվո հավաքը պահենք: Այսպիսով միայն փրկության հավաքը կգորանա մեր հոգիներու մեջ, և մենք վստահորեն կրնանք դիմագրավել ամեն փեսակի զրկանք և փորձություն: